Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2025 թվականի մարտի 31-ի N 115-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2025 թվականի ապրիլի 1–ից

«2+1 մուտք Travel քարտով» արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 01.04.2025թ-ից 31.12.2025թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից նախքան սույն Արշավը և Արշավի ընթացքում թողարկված Travel տեսակի քարտեր:
1.3 **Քարտապան՝** Արդեն գործող կամ Արշավի շրջանակներում թողարկված Travel տեսակի Քարտի քարտատեր:
1.4 **Visa Airport Companion՝** օդանավակայանների բիզնես սրահներ մուտք գործելու համար նախատեսված հավելված:
1.5 Արշավին մասնակցելու դեպքում Քարտապանն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակում՝ 01.04.2025թ-ից 31.12.2025թ-ը ներառյալ, ինչպես գործող, այնպես էլ նոր պատվիրված Travel տեսակի Քարտերի Քարտապաններն ունեն Օդանավակայանների բիզնես սրահներում հավելյալ 1 մուտքի հնարավորություն: Նախկին 2 այցի փոխարեն Travel տեսակի Քարտերի Քարտապանների համար մինչև Արշավի ավարտ սահմանվում է 3 այցի հնարավորություն առանց նախապայմանի:
2.2 Օդանավակայանների բիզնես սրահների ցանկը սահմանվում է Dragon Pass-ի կողմից, որը հասանելի է Visa Airport Companion հավելվածում:
2.3 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: